նեսեան՝ իբր ի ձեռակերտն իւր և ի նմանութիւն, զամբաւութիւնս համբարեալ գումարեսցէ. հաստատ և անսասան մնալ ի պահպանութեան ի պատուիրանացն Աստուծոյ, և արժանի լինել երկնահրաւէր ձայնի աւրհնութեան. ամէն։

Եւ ընդ աստուածապատիւ և առատածաւալ աւրհնութեանս, գիտելի եղիցի սիրելի և հոգեւոր որդւոցդ, զի մեք իբրեւ զհովիւ և տեսուչ բանաւոր հօտիդ, միշտ և հանապազ փոյթ ունիմք ամենեցուն ձեզ խնամ տանել, մանաւանդ ըստ երանելոյն Պօղոսի՝ Ուխտիւք խնդրէի ի Քրիստոսէ նզով լինել վասն ձեր, զի եղիջիք բնակարան վերնահոս շնորհացն և պահօղք պատուիրանացն Աստուծոյ։ Ահա ձեզ ամենեցուն յայտնի եղեւ թէ որքան վիշտ և նեղութիւն յամենայն դիմաց պատեաց զմեզ՝ վասն ի միոյ բառնալոյ զանկարգութիւն Եղիազարին, և զպարտս վճարելոյ. եօթն տարի է որ ի սուրբ աթոռոյս հեռացեալ՝ աւր ըստ աւրէ հաշիմք և մաշիմք ի տառապանս, և ոչ կարեմք աստի ելանել, զի մի՛ կաշառօք աւերեսցեն զուղղեալն մեր, այլ սիրով շահեսցուք զնոսա։ Դարձեալ, գիտելի եղիցի ձեզ, զի բազում կերպիւ վիրաւորեաց զմեզ Յովհաննէս վարդապետն. զոր մի ըստ միոջէ պատմելն՝ անպատեհ է, զոր արար յԵրուսաղէմ, ի Լիվոռնոյ, և յայլ տեղիս. մանաւանդ թէ որոյ հրամանաւ եկն առ ձեզ. կամ է՞ր արդեօք զպատճառ գնալոյն ի մեծն Հռոմ Նիկողայոս եպիսկոպոսին և անդ յամելոյն ոչ զեկոյց մեզ, և ի տեղին՝ առանց մերոյ հրամանի ինքնագլուխ նստաւ, և դուք ոչ խնդրեցիք ի մէնջ, այլ և զստոյգն ոչ ծանուցիք վասն առաջնորդին ձերոյ, թէ ինչ պէտս ի սրբազան Պապէն կոչեցաւ ի մեծն Հռոմ. և է՞ր արդեօք այսքան ժամանակս անդ յամենայ։ Ճշմարիտ գրեմք, զստոյգն և զիրաւն ոչ գիտեմք։

Արդ, որովհետեւ եպիսկոպոսն ձեր անդ յամեցաւ, և ամենեւին ոչ գիտեմք թէ միւսանգամ յետ դառնալոց է, կամեցաք զՍտեփանոս վարդապետն շնորհել ձեզ, իբր զայր հանճարեղ և տեղեակ ամենայն ճանապարհացն Աստուծոյ, լի շնորհօք և աստուածապաշտութեամբ. բայց նա յանձն ոչ առեալ, զմիայնակեցութիւն՝ առաջնորդութեանն նախադասեաց. վասն որոյ կոչեցաք Ի Ս. Էջմիածնայ ի Կոստանդինուպօլիս՝ զհոգեւոր և զսիրելի որդիս զՏէր Թէոդորոսն Վարդանեանց, զայր խոհեմ և իմաստուն, որպէս և ձեզ յայտնի է. և զնա ձեռնադրեցաք եպիսկոպոս, և վարդապետական իշխանութեամբ առաքեցաք առ ձեզ. զի եղիցի փոխանակ Նիկողայոս եպիսկոպոսին, և երկրորդ Նմին, այսինքն աթոռակալ և տեղապահ, որքան նա կենդանի է. իսկ զկնի մահուան Նիկողայոս եպիսկոպոսին՝ Թէոդորոս եպիսկոպոսն՝ ձեզ առաջնորդ հովիւ և տեսուչ է։ Եւ գիտեմք զի անագորոյնք և անուղղայք ոչ են պակաս. զի ոմանք ասելոց են, թէ մեք զնա ոչ խնդրեցաք. իսկ թէ ցաւ լինէր ձեզ՝ վաղ ուրեմն խնդրեալ էիք. զի հօտն առանց հովուի կերակուր է գազանաց։ Ահա ետու ձեզ հովիւ ըստ սրտի իմում, որ հովուելով հովեսցէ զձեզ իմաստութեամբ. վասն որոյ պարտ է ձեզ ամենեցուն հնազանդ լինել. զի որպէս ասէ վարդապետն մեր Քրիստոս, « Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, և որ զձեզ ընդ-